

Կ-868-16.02.2021,09.04.2021-SՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-402-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածը լրացնել հետեյալ բովանդակությամբ 2.1-ին եւ 2.2-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերից բացի մաքսային մարմնի հանրային ծառայողները ծառայողական շներ կարող են կիրառել նաեւ՝

1) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետությունն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի եւ յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.

2) քննչական գործողությունների եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի եւ յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:

2.2. Ծառայողական շների կիրառման, վարժեցման եւ պահման կարգը հաստատվում է մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:»:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածում 5-րդ մասում «զինամթերքի» բառը փոխարինել «ռազմամթերքի» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 4. Մաքսային մարմնի ղեկավարը ծառայողական շների կիրառման, վարժեցման եւ պահման կարգը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-402-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2¹2.1-ին և 2²2.2-րդ մասերով.

«2¹2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերից բացի մաքսային մարմնի հանրային ծառայողները ծառայողական շներ կարող են կիրառել նաև՝

1) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.

2) քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:

2²2.2. Ծառայողական շների կիրառման, վարժեցման և պահման կարգը հաստատվում է մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:»:

~~Ծառայողական շների կիրառումն արգելվում է հետևյալ դեպքերում՝~~

~~1)՝ մարդու կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնալու դեպքում.~~

~~2)՝ ծառայողական շան նպատակային նշանակությանը ոչ համապատասխան գործողության կատարման դեպքում.~~

~~3)՝ այն դեպքում, երբ առկա են այնպիսի պայմաններ, որոնք կարող են նպաստել շան աշխատունակության խաթարմանը և (կամ) կարող են վտանգել նրա առողջությունը:»:~~

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածում 5-րդ մասում «զինամթերքի» բառը փոխարինել «ռազմամթերքի» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 4. Մաքսային մարմնի ղեկավարը ծառայողական շների կիրառման, վարժեցման եւ պահման կարգը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԱՔՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-868-16.02.2021,09.04.2021-SՀ-011/1) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	<i>ՀՀ կառավարություն</i>	«Մաքսային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի վերնագիր	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ նախագծի վերնագրում առաջարկում ենք «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 2-րդ հոդվածով «Մաքսային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 5-րդ մասում կատարվում է փոփոխություն:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
2.	<i>ՀՀ կառավարություն</i>	«Մաքսային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 1-ին հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասը՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելիս փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի հոդվածների մասերի համարների փոփոխություն չի կատարվում, նորմատիվ իրավական ակտի հոդվածների մասերի միջև նոր մաս կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 28-րդ հոդվածը կազմված է 3 մասից՝ առաջարկում ենք 28-րդ հոդվածում լրացվող նոր մասերը համարակալել համապատասխանաբար՝ «2.1» եւ «2.2»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

3.	<p>«Վաքսային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 1-ին հոդված</p>	<p>«Մաքսային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 1-ին հոդված</p>	<p>Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 28-րդ հոդվածում լրացվող նոր 2.2-րդ մասով նախատեսված դեպքերում արգելվում է հատուկ միջոց հանդիսացող ծառայողական շների կիրառումը, սակայն հարկ է նկատել, որ նոր լրացվող մասի 1-3-րդ կետերում նկարագրված պայմանները բավարար չափով որոշակի սահմանված չեն, ինչը կարող է հանգեցնել նորմի կիրառման խնդիրների: Մասնավորապես՝ հստակեցված չեն մարդու կյանքին եւ առողջությանը վտանգ սպառնալու դեպքերի շրջանակը կամ քննարկվող պայմանի առկայության գնահատման չափանիշները, ինչպես նաեւ խնդրահարույց է «ծառայողական շան նպատակային նշանակություն» ձեւակերպման կիրառումը: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է հստակեցնել Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 2.2-րդ մասի 1-3-րդ կետերում նախատեսված կարգավորումները: Առաջարկում ենք 2.2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«2.2. Ծառայողական շների կիրառման, վարժեցման եւ պահման կարգը հաստատվում է մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:»:</p>	<p>Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է</p>
----	---	---	---	---	--------------------

4.	ՀՀ կառավարություն	«Մաքսային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդված	Նախագծում ավելացվել է 4-րդ հոդվածով սահմանված անցումային դրույթ, որով նախատեսվում է, որ մաքսային մարմնի ղեկավարը ծառայողական շնորհ կիրառման, վարժեցման եւ պահման կարգը հաստատում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
----	--------------------------	--	---	--	-------------